



« ԹՈՂ ՏՈՒՔ ԲՈՒՄ ԵՂՈՅԸ ՈՐ ԲԼՈՒ ԳԱՆ » ԳՈՒԿ. ԵԸ. 46.

ՀԱՏՈՐ Ժ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՕԳՈՍՏՈՍ 1, 1881

ԹԻՒ 8



ՄՐ. ԿԱՏԱԳՈՆ

Հիմա դաշխարհ կառավարող քաղաքագէտ անձանց մէջ շատ երևելի է Անդղիոյ առաջին պաշտօնեայն, Մր. կրատագոն : Բայց ի Պիդմարք էշխանէն թերևս չկայ մէկը որ Մր. կրատագոնի չափ ընդարձակ ազդեցութիւն ունենայ աշխարհի գործոց վրայ : Մր. կրատագոն ծնած է 1809 ին, ուստի և հիմա է 72 տարեկան : Այս նշանաւոր անձը, թէև միշտ ծանրադրազ, զարմանալի կերպով պահած է իւր մարմնայ և մտաց գործութիւնն ու կրօնը և ամէն օր ներկայ կը գանձի Անդղիոյ ազգային ժողովոյ, և երկար ու իմաստայից ատենարանութիւններով կը ջանայ Բրիտանական ընդարձակ պետութեան ճշմարիտ շահերը պաշտպանել : Մր. կրատագոն կրօնի և առողջ մնացած է գլխաւորապէս կանոնաւոր և պարզ կեանք վարելուն համար : 1. Այս մեծ անձը ուսուցիչ և բնակչու մասին չափազանցութեան կը խոսչի : 2. Որպէս ժամկէտ կը նրն ջէ : Թէև իւր պաշտօնին վերաբերեալ պարսականութիւնը շատ անգամ կը ստիպեն զնա զեղերն ու շատեն մնալ Անդղիոյ ազգային ժողովոյ մէջ, սակայն կրտէ թէ երբ կ'առանձնանայ իւր ննջելու սենեակը, տէրութեան ամէն հող դուրս կը թողու : 3. Շատ մարմնամարդութիւն կրնէ : Յաճախ կը քայէ հեռաւոր տեղեր, բայց մարմինը զօրայնելու համար անոր սիրելի գործն է իւր անասունակին մէջ ծառերը կարել տալ պարել : Մր. կրատագոն ծառերը կրտրելու համար տեսակ տեսակ գեղեցիկ կայիններ ունի, և ծառ կտրելու գործին մէջ վարժ է :

Ունի գեղեցիկ տուն մը, Հաւարտէն դղեակը, արևմտեան Անդղիոյ մէջ Չէստէր անուն հին քաղաքին իւր վեց մըն հեռու :

Մր. կրատագոն Անդղիոյ կառավարութեան գործին մէջ կը գտնուի յիսուն տարիէ ի վեր և մասն ունեցած է գրեթէ բոլոր բարեկարգութեանց մէջ որ յիսուն տարիէ հետէ կատարուած են Անդղիոյ կառավարութեան մէջ : Հիմա ազգային ժողովոյ միջոցաւ կ'աշխատի հաստատել նոր օրէնք մը որոյ ծրագիրն ինք պատրաստած է իրանասոյի երկրագործ ժողովրդեան փնտախին բարուրման համար : Միշտ համակիր եղած է ամէն ժողովրդաց որ վատթար վարչութեան տակ կը հեծեն և կը հարրատահարուին : Շատ ուղիղ և իւր խօսքին տէր մարդ է : Ինչ որ կը գրէ և կը խօսի, անկեղծութեամբ է : Նաև ջերմեանդ Քրիստոնեայ է : Անոր երկու որդիքն որ իրենց պատ-

կառելի հօր ազատական գաշտարներն ունին, Անդղիոյ ազգային ժողովոյ անդամ են, և ուրիշ մէկ որդին Հաւարտէնի եկեղեցւոյ հովիւն է : Ուրախալի է քրիստոնէից տեսնել Մր. կրատագոնի նման ուղիղ ջերմեանդ և անկեղծ քրիստոնեայ քաղաքագէտ մը որ իր ձեռքն ունի աշխարհի ամենէն հզօր տէրութիւններէն մէկուն զեկը : Կաղօթենք որ երկար ատեն ապրի այս անձը Մեծին Բրիտանիոյ ազգեցութիւնը գործածելու համար յօգուտ աշխարհի :

ԵԿԵՂԵՑԻ ԵՐԹԱԼ

Կիրակի մը Միհրանայ հայրը տունը չէր, և մայրը հիւանդ էր, բայց Միհրան միտքը դրաւ եկեղեցի երթալ ըստ սովորութեան : Միհրան զեռեօթը տարեկան էր, ուստի մայրը կը խորհէր թէ ազուն մինակ եկեղեցի երթալն արդեօք աղէկ էր : Բայց արդան միշտ հանգարտ կեցած էր, և խոստացաւ մօրը պատկասանօք կենալ մանաւանդ այն օր եկեղեցին, որպէս թէ մայրը հանձն էր : Վերջապէս մայրը հաւատաց անոր խօսքին :

Երբ մօրը հաճութիւնն առաւ Միհրան եկեղեցի երթալու, կը փաթար որչափ հնար էր վաղ երթալ, և եկեղեցւոյն ետքը Միհրան էր եկեղեցին մանող առաջին անձը : Արդարեւ ըստ ազգին է շատ կանուխ երթալ եկեղեցի քան շատ ուշ : այնպէս չէ :

Մինչ պաշտօնեան կը կարգար Սուրբ գերբէն, Միհրան որ զեռ աղէկ կարգալ չէր գիտէր չէր կրնար հետեւել ընթերցումին, բայց կրցաւ երգելուն տեղերը գանել երգարանին մէջ, և զգուշութեամբ միտ դրաւ նաև ծանուցմանց, այնպէս որ կրցաւ ըսել իւր մօրը թէ ուր պիտի ըլլար այն շարժուն տիկնայ ժողովը : Քարողին մեծ մտքը Հասկցաւ Միհրան, բայց մեծ հանգարտութեամբ նստաւ քարողին սկիզբէն մինչև վերջը : Միհրան առանձին եկեղեցի երթալէն շատ ախորժեցաւ, թէպէտ աւելի հաճելի պիտի ըլլար անոր, եթէ ազգական մը կամ ծանօթ մը ունենար իրեն ընկեր :

Բայց Միհրանայ ուղեք մինակ եկեղեցի երթալ ըստ ազգին էր, քան եթէ ըսէր, «Այսօր չեմ ուղեր եկեղեցի երթալ, քանզի մինակ եմ» : Կարծեմ թէ Միհրան ուղիղ մտքը զնայ եկեղեցի, այսինքն վասնզի Աստուծոյ տունն է եկեղեցին, և կիրակին Աստուծոյ օրն է : Արդարեւ Միհրան սովորած էր երթալ եկեղեցի մինչդեռ երեք կամ չորս տարուան

էր, ծնողքը կը տանէին զնա ի միասին պաշտօնի, և եթէ չտանէին, Միհրան կը արամէր և կը փափաքէր երթալ, ոչ թէ վասնզի սովոր էր, այլ վասնզի պարտք կը համարէր իրեն երթալ աստուածային պաշտօնի :


Տղայք, սովոր էք երթալ եկեղեցի և ըսել Աստուծոյ խօսքին քարուղութիւնը : Այս է ձեր պարտքը : Կիրակնօրեայ դպրոցը զուարճալի տեղ է : Հոն կը սովորէք այլևայլ գեղեցիկ և պատուական դասեր Սուրբ գերբէն, և կը սիրէք ձեր ուսուցիչը և ընկերները : Բայց կիրակնօրեայ դպրոցը չի բռներ եկեղեցւոյ տեղը : Կան բաներ զորս եկեղեցւոյ մէջ կը սովորէք և ոչ կիրակնօրեայ դպրոցի մէջ : Երկուքն ալ հարկաւոր են : Մին չի կրնար միտնայ տեղը բռնել : Տղայք սովորելու են ճշգիւ և ժամանակին երթալ ոչ միայն կիրակնօրեայ դպրոց, այլ և եկեղեցի :

Քան մը բռնմ ձեզ, թերևս խորհած չէք երբէք ասոր վրայ : Դաք կրնաք օգնել ձեր երիցուն կամ քարուղին այս, կրնաք օգնել անոր, թէև գեռաղայ էք : Տեսած չեմ պաշտօնեայ մը, թէև շատեր կը ճանչնամ, որ ախորժած չէ տեսնել տղայք իւր ժողովներուն մէջ : Պաշտօնեայն լաւ ևս կը քարոզէ, երբ մեծ բազմութիւն կը տեսնէ տղայոց :

Ուրիշ բան մ'ալ բռնմ : Աղէկ է եկեղեցի երթալը սովորութիւն ընել : Երբ կը մեծնաս, կ'ըլլաս աւելի աղէկ մարդ կամ կին, եթէ սովորութիւն բրած ես ի մանկութենէ երթալ եկեղեցի : Աննք որ սոպայութեան առան չեն ստանար այս սովորութիւնը, հոս անտիկան է թէ պիտի չստանան երբէք : Պատճառը թէ լինու համար այչափ հասուն մարդիկ կ'աւրին կիրակին և չեն երթար երբէք կամ գրեթէ երբէք եկեղեցի, այս է որ ի սոպայութենէ սովորած չեն երթալ, և յետոյ չեն խորհիր, կամ թերևս կ'ատեն եկեղեցին և ամէն բարի բան :

Ապա, սիրելի տղայք, սովորեցէք եկեղեցի երթալ, հանգարտ նստեցէք հոն, երգեցէք և ազօթեցէք ի միասին, մտիկ ըրէք քարոզը, և թէպէտ հասկնաք բոլորովին, կան բաներ զորս կրնաք հասկնալ : Այս աշխարհի վրայ Աստուծոյ տան մէջ պաշտօն մատուցանելը պատրաստութիւն է պաշտօն մատուցանելու Աստուծոյ երկինքը առանց մեղաց :

«Կուրախանայի երբոր ինծի կրտէին, Տէրօք տունը երթանք : Մեր ոտքերը քու դռներուդ մէջը կայնեցան, ով երուսագէմ» :



ՀԱՆՔԱՄՈՒԽ

Աւետարեանի մայիս ամսոյ թուոյն մէջ համառօտիւ նկարագրեցինք թէ ինչպէս կազմուած են հանքային ամ- խոյ խաւերը : Կը յուսանք թէ մեր ընթերցողք հաճութեամբ պիտի ու- զեն փոքրի շատէ տեղեկութիւն ըս- տանալ թէ ամուխը հանքէն ինչպէս կը հանուի և վաճառանոց կը բեր-


ծուխը կը վառի շատ քիչ կազ և բոց արձակելով :

Քիչ տարի է որ հանքային ամու- խըն ընդհանուր գործածուի սկսած է, բայց ամէն տարի Անգլիոյ, Գա- ղիոյ, Գերմանիոյ և Միացեալ Նա- հանգաց մէջ միլիոնաւոր բեռ հան- քածուխ կը սպառուի :

յին իրենց տեղը, տան մը ասնիքին վրայ հասնելով, ներսէն երկու հոգւոյ կուռելուն արաղակը լսեցին և կեցան մտիկ ընել :

Քիչ մը տկամջ դնելէն ետքը լսե- ցին որ մարդ մը կ'ըսէր. «Քարին թող գայ, չարը երթայ» : Ատոր հակառա- կը կ'ըսէր կին մը. «Չարը թող գայ, բարին երթայ» :

ուի : Ինչպէս նախըն- թաց յօդուածին մէջ ըսինք, ամուխ խա-ւերէն ոմանք քանի մը մատ միայն թանձր են, և այլք՝ քան և աւելի ուր : Միայն թանձր խաւերն են զորս բանալ շահա-ւոր է : Անգլիոյ մէջ ամուխ բոլոր հանքե-րը երկրին խորերն են, և ամուխը մե-քենաներով դուրս կը հանուի : Ամերիկայի մէջ շատ հանքեր լե-րանց կազերն են : Բանուորները լերան կողը կը բրեն, և ինչպէս կը տեսնուի պատկերին վերի մա-սին մէջտեղը, թանձր միճով ամուխը խա-ւէն կը քակեն, և փոքր սայլերու մէջ դնելով կը բերեն հանքին բերանը : Յե-տոյ այս սայլերը դը-րամուէյով կամ եր-կաթուղով կը բեր-ուին վարի հովիտը, ու ամուխը կը պար-պուի մեծ կառքերու մէջ, ինչպէս կը յու-սցինէ պատկերը, կամ նաւակներու մէջ, և կը տարուի վաճառա-նոց : Կան ամուխ տե-տակներ որ երբ կը փառին, շատ ծուխ և փոշի կ'արձակեն : Երբեմն այս տեսակ ամուխը կը տարջնեն մեծ փուռերու մէջ :



Այսպէս կազուտ մասերը դուրս կը ցրե- ղին, և տաքնալէն ետքը ամուխն մնաց-եալ մնալ թելի և մաքուր տեսակ ա-ծուխ կ'ըլլայ : Պատկերին վարի մասին մէջ կը տեսնուին փուռերը յորս կը պատրաստուի այսպիսի ամուխ : Այս գործողութիւնը փայտի ամուխ շինելու գործողութեան նման է : Ամերիկայի մէջ շատ ամուխ խաւեր կ'երևի թէ ջերմութեամբ զտուած են դեմնին տակ, և այն խաւերէն հանուած ա-

ԳՈՂՆԵՐ ԱՍՏՈՒԱԾ Կ'ՈՂԼԱՆ ՉԻՆԱՍՏԱՆ Բէքինի մէջ մեհենի մը շինութեան համար սա աւանդութիւնը կը պատ-մուի :

Ժամանակաւ Չինաստանի մէջ հինգ աւազակներ կային որ մեծ սարուսի տուած էին իրենց մտատկայ երկրին բը-նակիչներուն : Գիշեր մը իրենց աւազա-կութեան գործը յաջողութեամբ կա-տարեղէն ետքը, երբ տանիքներու վը-րայէն ըստ սովորութեան կը դառնա-

Այր և կին նե-ղութեան մէջ էին : Կարուսած էին իրենց բոլոր ստակը, և չէին դիտեր թէ ինչպէս շահէին իրենց օրա-պահիկը : Այլը կը բաղձար անիրաւ և ապօրինաւոր դործ մը չընել թէ և հարկ ըլլար նեղութեամբ ապրել . իսկ կինը պատրաստ էր ապ-րուստի համար ամէն բան ընել, գողու-թիւն անդամ, եթէ հարկ ըլլար : Այս էր անոնց վէճը :

Աւազակները խոր-հեղով թէ կինը կըր-նար անոնց օգնել ժամանակաւ, քոակ մը ոտով դրին տանը դրան առջև : Հետե-կալ առատու այր և կին կանուխ գուռը բանալով տեսան քը-սակը : Սկսան խոր-հել, «Ուստի՞ եկաւ այս ստակը» : Յիշեցին որ գիշերը սոնածայն առած էին, ուստի ը-սին թէ գիշերը բեր-ուած և հան գրուած էր քոակը . բայց միջ էր բերողը, դե՞ մը թէ աստուած մը : Վայը մը խորհեղէն ետքը որոշեցին թէ, ուստի և եկած բը-լար այն ստակը, կըր-նային աւնուլ և գոր-ծածել գոյն :

Ի սկզբան զուշա-լոյն շատ ծախք ընել ուրիշներուն գողութեան կատկած չտալու հա-մար : Այլը փոքրիկ սափոր մը ըմ-պելի դնեց, և կողովի մէջ դնե-լով զայն, դաւապանով առաւ կըռ-նակը և կը վաճառէր : Քանի մը օր ետքը ուրիշ սափոր մը դնեց, յետոյ դարձեալ ուրիշ մը, և ժամանակ մը ետքը դնեց փոքր ձեռքի կառք մը և աւելի սափորներ, և այսպէս յառաջ երթալով վերջապէս եղաւ սէր խանթի

մը ուր այլևայլ տեսակ ըմպելիք կը վաճառուէին :

Այս միջոցին աւազակները յառաջ կը տանէին իրենց գողութիւնը, և երթալով կը հարստանային : Ի վախճանի, ինչպէս կը պատահէ ընդհանրապէս, աւազակները բռնուեցան և բանտարկուեցան :

Քանի մը օր ետքը աւազակներուն զլխաւորը հրաման խնդրեց բանտապետէն երթալ տեսնել իւր քոյրը և իւր լաթերը լուալ տալ անոր : Բանտապետը հրաման տուաւ անոր երթալ, բայց հետը ոստիկան մը դրաւ : Աւազակապետը գնաց շիտակ ըմպելի վաճառողին խանութը, և կաշառելով ոստիկանը թողուլ գազա խօսել իւր կարծեցեալ քրոջ հետ, ներս մտաւ և խօսեցաւ ըմպելի վաճառողին կնոջ հետ այսպէս :

«Ինչպէս էք, մեծ քոյր :»

«Շատ աղէկ,» պատասխանեց կինը՝ մարդուն երեսը նայելով զարմացմամբ :

«Կը յիշե՞ս արդեօք որ քանի մը տարի առաջ ստակով լի քսակ մը գտար ձեր դրան առջև,» հարցուց մարդը :

Կինը սարափեցաւ, և չէր համարձակեր բան մը ըսել : Մարդը սկսաւ պատմել անոր թէ ինչպէս, երբ իւր ընկերներով տանիքին վրայէն կ'անցնէր, լսեց կնոջ կռիւն իւր ամուսնոյն հետ, և ի վերջոյ հասկցուց թէ այս ինչ աւազակները դրած էին այն քսակը, և թէ ինք այն աւազակներուն գլխաւորն էր : Յետոյ ըսաւ. «Մրդ, մենք հիմա նեղութեան մէջ ենք, և կարօտ ենք քու օգնութեանդ : Այս վերարկուն բերի քեզ լուալու : Անոր պատուը քակելով, բամբակներուն մէջ պիտի գտնես պատուական քարեր : ասոնց մէկ մասը զրկեցէք բանտապետին, և մնացեալը՝ կայսեր : Շատ զեղեցիկ ազամանդ մը կայ, զայն զըրկեցէք կայսեր, որ շատ կը սիրէ ազամանդը :»

Կինը խոտտացաւ ընել ինչ որ պատուիրեց աւազակը, և կատարեց հաւատարմութեամբ :


Ձինու կայսրը լսելով թէ աւազակները բանտն էին, ուզեց տեսնել զանոնք, և բերել տուաւ իւր առջև և վայր մի անոնց երեսը նայելէն ետքը գոչեց. «Քրու սին Չայ չէն,» այսինքն «Մրդարև հինգ հարուստ աստուածներ :»

Այն վայրկենին, կըսէ առասպելը, հինգ աւազակներն աներևոյթ եղան, և այլ ևս չերեցան : Ժամանակ մը ետքը, անոնց պատուոյն շնուեցաւ մեհեան մը որ կը մնայ ցարդ : Շատ վաճառականներ և առևտրոյ մարդիկ Բէքիի մէջ ամէն տարի կ'երթան այս մեհեանը, կը գողնան քիչ մը թղթաղբամ, և տուն բերելով կ'այրեն զայն իրենց աստուածներուն առջև, կարծելով թէ այսու պիտի յաջողի իրենց գործը : Եթէ արդարև յաջողութիւն կը գտնեն, տարւոյն վերջը հորհակալութեան ընծայ կը տանին մեհեանը : Բայց թղթաղբամը գողցուելու է, ապա թէ ոչ օգուտ չընէր :

Ձինացիներէն ոմանք կ'ըսեն թէ այս պատմութիւնը ճշմարիտ չէ. բայց որովհետև հազարաւոր Ձինացիք կը հաւատան, այս բաւական է ցուցնելու թէ անոնք ինչպիսի աստուած մը կուզեն :

կան սուր սուր ակուններ իրենց որսը պատառելու համար : Ձմեռ առան Սլիկադորներն Եգիպտոսի կոկորդիլոններուն նման կը թմրին, այսինքն ցեխի մէջ կը թաղուին և կերչեն ուտեր : Վազուն ջուրերէն աւելի կ'ընտրեն անշարժ ջուրեր, և երբեմն լիճերուն եզերքը կամ ծանծաղ ջուրերու մէջ բացը արևու մէջ կը պառկին :

Էգ կենդանին աւագի մէջ տեղ մը սագի ձուերու մեծութեամբ 30 կամ 60 ձու կ'ածէ, և կը թողու այնպէս որ արևուն տաքութեամբ ձագերը դուրս ելլեն : Այս կենդանոյն ոսկրոտ վահանակներն այնպէս կարծր են որ հրացանի գնդակը չի կրնար ծակել զանոնք, և այս անասունը հրացանով զարնել այն առան միայն կարելի է երբ գնդակը կը հանդիպի անոր աչքին կամ մարմնոյն այն մա-



Ա. Լ. Ի. Կ. Գ. ՈՐ ԿՍՄ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿՈՎՈՐԳԻՒՆՍ

Այս կենդանին կը գտնուի Ամերիկայի տաք երկիրներուն մէջ, և առաջ կը կարծուէր թէ Եգիպտոսի կոկորդիլոսին հետ նոյն էր : Այս կենդանին քանի մը տեսակ է : Բոլոր տեսակներն ունին երկայն և տափարակ դուրս, թանձր պարանոց և անոնց մարմինները ծածկուած են կարգ կարգ կարծր վահանակներով : Ունին չորս ոտք և շատ երկար ազի որ կ'օգնէ անոնց լողալու, և զորս անոնք կը գործածեն իրենց պաշտպանութեան համար : Այս անասուններէն ոմանք կ'ըլլան 14 կամ 13 ոտք երկայն, և վայրագ ըլլալով կը բռնեն և կը մեռցունեն մարդեր և մեծ անասուններ : Անոնց բերանը շատ մեծ է, ընդհանրապէս անոնց մարմնոյն մէկ եօթներորդին չափ, և բերնին մէջ

սին որ վահանակներով ծածկուած չէ : Այս վահանակները կարգեւ ին կենդանին արագութեամբ և աղաւթէն անդին սողին դառնալ, և այսպէս դիւրին է մարդու մը փախչիլ անոր առջևէն : Կ'ըսուի թէ այս ամերիկեան կոկորդիլոսին թէ ձուն և թէ միտը անդարար կերակուր են :

Ա. Ի. Ե. Տ. Ա. Բ. Ե. Ր ԳԻՆԵՐԸ

ԱՄՍԱԿԱՆ (Հայերէն, Հյ. Յ. քր. ճանկերէն և Պոլսեցիքէն), փոսթայի ծախքով, տարին 1/4 մեծխոյնէ : ՇԱՐՍԱԿԱՆ (Հայերէն, Հյ. և Յ. քր. ճանկերէն) փոսթայի ծախքով, տարին 1 1/2 արծաթ մեծխոյն : 10 սու 100 զեղջ կ'ըլլայ անոնց որ 100 դահեկանի կամ աւելի լրագիր կ'ապսպրեն, և թէ լրագիրք մէկ անձի ուղղուին :

Ամերիկայի Մեխիկոսոց ընկերութեան կողմէն Իմքադիր ձ. Բ. ԿԻՒՆ Ֆիլանսօրը կ'օգուշու. Ամերիկան իսան ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ ՏՊԱՐԿՈՒԹԻՒՆ Ա. ՅԱՆՈՐ ՊՈՅԱՅԵԱՆ